



13.05.2014

Այս նախիսի 17-ին ժամը 18:00-ից արդեն 10-րդ անգամ Եվրոպայի թանգարանները միասին կազդարարեն Թանգարանների եվրոպական գիշերը՝ Թանգարանների միջազգային օրվան՝ նախիսի 18-ին ընդառաջ: ԻԿՕՄ-ի կողմից առաջադրված <<Թանգարանային հավաքածուները ստեղծում են կապեր>> խորագրի ներքո Եվրոպայի բազմամիլիոն հասարակությունը կրկին կհամախմբվի թանգարանների շուրջ՝ ընդգծելով այցելուներ-սերունդներ-մշակույթներ կապը: Ստեղծումից ի վեր անմիջապես դառնալով համաեվրոպական նախաձեռնություն՝ Թանգարանների եվրոպական գիշերը այս տարի իր տասնամյակը կնշանավորի նաև Հայաստանի Հանրապետությունում:

Երևանի քաղաքապետարանի <<Էրեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանը նախիսի 17-ին իր այցելուներին կընդունի արևամուտից մինչև կեսգիշեր՝ փորձելով տոն պարզեցնել իր հին ու նոր այցելուներին:

<<Թանգարանային հավաքածուները ստեղծում են կապեր>> խորագրի համատեքստում թանգարանը գիշերասեր այցելուներին կներկայացնի ճանաչողական ֆիլմ՝ մարդկության հիշողություն համարվող աշխարհահռչակ Բրիտանական թանգարանի հավաքածուների վերաբերյալ: Ֆիլմը, որ 2013թ. ամռանն արգելոց-թանգարանին է նվիրել ճանաչողական այցով Էրեբունի այցելած Բրիտանական թանգարանի պատվիրակությունը, 40 րոպե տևողությամբ յուրօրինակ շրջայց է թանգարանի սրահներով: Այն այցելուին կծանոթացնի թանգարանի ամենահայտնի առարկաներին և, միաժամանակ, ամեն մեկին հնարավորություն կտա պատկերացնել իր տեղը համաաշխարհային պատմության մեջ: Ֆիլմը կցուցադրվի ժամը մեկ պարբերականությամբ (ժամը՝ 18:00, 19:00, 20:00)՝ ընդմիջվելով <<Վան>> ազգագրական համույթի երգ ու պարի կենդանի կատարումներով: <<Ուրֆանե>>, <<Սեբաստիո>>, <<Ջընգըրթա>> պարերը, <<Ամռան գիշեր>>, <<Աշնան գիշեր>>, <<Ճախարակ>> և այլ երգերը այցելուին գուցե կտանեն Վան-Ուրարտուի ոչ նյութական մշակույթի ակունքներ:

<<Էրեբունի>> արգելոց-թանգարանի պատանի հնագետները ևս կմիանան Թանգարանների գիշերվան՝ իրենց հասակակիցներին հրավիրելով ժամը 17:00-19:00-ի սահմաններում դիտել ուսումնական պեղավայրում ընթացող պեղումները, ինչը, անկասկած, կխթանի շատերի հետաքրքրությունը դեպի այդ առեղծվածային աշխարհը՝ հնագիտությունը:

Թանգարանում մշտապես նոր ցուցանմուշ փնտրող այցելուների համար միայն մայիսի 17-ին Էրեբունի թանգարանը <<Մեկ ցուցանմուշ, մեկ պատմություն>> խորագրի ներքո իր ֆոնդապահոցից 1-ին անգամ կներկայացնի Ք. ա. 8-րդ դարով թվագրվող ագաթե կոճակ՝ հայտնաբերված Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի մոտ պեղված մանկահասակ աղջկա դամբարանից:

Մայիսի 17-ին ժամը 21:00-ից Էրեբունին համացանցով կմիանա <<Գեղադիտակ>> միջազգային նախագծին՝ թանգարանի կողային բակում կազմակերպված վիրտուալ պատին դիտելով Թանգարանային գիշեր-2014-ը ներկայացնող լուսանկարներ՝ արված սմարտֆոններ ունեցող այցելուների կողմից: Այս նախագիծը Գիշերվա բոլոր մասնակիցներին կմիավորի լուսանկարների մեկ ալբոմում՝ դառնալով կապերի ու հաղորդակցության, բարձր տրամադրության և յուրօրինակ մրցույթի հրաշալի միջոց:

Էրեբունիում հորելյանական Թանգարանային գիշերվա գործընկերը ABCConnexion կազմակերպությունն է:

<<Թանգարանային հավաքածուները ստեղծում են կապեր>> խորագրի շրջանակում խթանելով միջթանգարանային համագործակցությունը՝ <<Էրեբունի>> արգելոց-թանգարանը Երևանի քաղաքապետարանի <<Կարեն Ղեմիրձյան>> թանգարանին ժամանակավոր ցուցադրության կտրամադրի ուրարտական որմնանկարների 6 կրկնօրինակներ: Ժամանակավոր ցուցադրությունը կկրի <<Անակնկալ գիշերով>> խորագիրը՝ իրապես անակնկալի բերելով <<Կարեն Ղեմիրձյան>> թանգարանում ուրարտական մշակույթի դրվագների հանդիպող այցելուներին:

Այցելի՛ր Էրեբունի մայիսի 17-ին,

մասնակցի՛ր Գիշերվա 10-րդ տարեդարձին և

քեզ հետ տուն տա՛ր հիշարժան տպավորություններ ու տրամադրություն: